



**Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և  
համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության»  
(ԳԱՏՕ) ծրագիր  
Հայտ ներկայացնելու հրավեր (ՀՆՀ)**

**Ինժեներական նախագծերի պատրաստում և շինարարության նկատմամբ  
հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում  
Արմավիրի մարզի Եղեգնուտ և Առատաշեն գյուղերի ջրամատակարարման  
համակարգի բարելավման ծրագրի շրջանակում**

ՀՆՀ-ի անվանումը՝ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագիր: Եղեգնուտ և Առատաշեն գյուղերի ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագրի շրջանակում ինժեներական նախագծերի պատրաստում և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում

**ՀՆՀ-ի համարը՝ # 010818-01**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԱՄՆ ՄԶԳ-ի հայաստանյան առաքելության «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից՝ թիվ AID-OAA-I-14-00070/AID-111-TO-15-00001 պայմանագրի համաձայն: Վերջինս կնքված է ԱՄՆ ՄԶԳ-ի Water and Development WADI IDIQ-ի շրջանակներում: ԱՄՆ ՄԶԳ WADI IDIQ-ի և ԳԱՏՕ ծրագրի պայմանագրային պայմանները կիրառելի են նաև կնքվելիք պայմանագրի համար: Հավելված Բ-ում ներկայացված են հատվածներ WADI IDIQ-ից և ԳԱՏՕ ծրագրի պայմանագրից:

Հնգամյա ԳԱՏՕ ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը Արարատյան դաշտում ստորերկրյա ջրային ռեսուրսներից ջրառի ծավալների նվազեցման և կայուն վիճակի պահպանման գործում: Վերջինս իրականացվում է գիտական, տեխնոլոգիական, նորարարական մոտեցումների կիրառման և շահագրգիռ կողմերի հետ համագործակցության միջոցով՝ խթանելով ջրային ռեսուրսների կայուն կառավարումը և ջուր-էներգիա փոխկապակցության համատեքստում ջրօգտագործողների կողմից առաջադեմ փորձի կիրառումը: ԳԱՏՕ ծրագիրն իրականացվում է ME&A, Inc. (ME&A) ընկերության կողմից:

ME&A ընկերությունը հրավիրում է ներկայացնելու հայտեր Արմավիրի մարզի Եղեգնուտ և Առատաշեն գյուղերի ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագրերի իրականացման նպատակով ինժեներական նախագծերի պատրաստման և շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար:

Հետաքրքրված հայտատուներին հրավիրում ենք ներկայացնել հայտեր՝ համաձայն ստորև բերված ուղեցույցի: Յուրաքանչյուր հետաքրքրված հայտատու կարող է ներկայացնել միայն մեկ հայտ: Մեկից ավելի հայտ ներկայացրած հայտատուները կորակագրվեն և նրանց հայտերը կմերժվեն:

Սույն ՀՆՀ-ի հրապարակմամբ ME&A-ն չի կրում որևէ պարտավորվածություն կնքելու պայմանագիր կամ տալու գնման պատվեր, ոչ էլ հանձն է առնում վճարել հայտի պատրաստման և ներկայացման ծախսերը: ME&A-ն իրավունք ունի մերժելու ցանկացած կամ բոլոր հայտերը:

## **ՀԱՅՏՏԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՍՄԱՐ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**1. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը, ուղեցույցը և ընթացակարգը:** Հայտերը պետք է ներկայացվեն **մինչև 2018թ.-ի օգոստոսի 16-ը՝ Երևանի ժամանակով ժամը 17:00:** Հայտատուները պետք է իրենց Տեխնիկական առաջարկի և Գնառաջարկի տպագիր տարբերակը մեկ օրինակից հայերեն լեզվով ներկայացնեն ԳԱՏՕ ծրագրի գրասենյակ՝ ք. Երևան, Տերյան 105/1, Ցիտադել բիզնես կենտրոն, 204 սենյակ հասցեով:

Տեխնիկական առաջարկն իր մեջ պետք է ներառի սույն բաժնի 3-րդ կետում նշված տեղեկությունները: Գնառաջարկները պետք է ներկայացվեն առանձին՝ Հավելված Ա-ում՝ «Գնառաջարկ» տրված ձևաչափով:

Հայտը պետք է դրված լինի երկու առանձին փակ ծրարների մեջ, որոնք կնքված ու ստորագրված են հայտատուի կողմից: Առաջին ծրարում դրվում է Տեխնիկական առաջարկը, երկրորդում՝ Գնառաջարկը: Երկու ծրարների վրա պետք է գրված լինի՝ հայտատու կազմակերպության անվանումը, «**Եղեգնուտ և Առատաշեն գյուղերի ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագիր**» և ՀՆՀ-ի համարը՝ 310718-01»:

**2018թ.-ի օգոստոսի 9-ին՝ ժամը 16:00-ին,** ԳԱՏՕ ծրագրի գրասենյակում տեղի կունենա հետաքրքրված հայտատուների հետ նախամրցութային հանդիպում՝ հետաքրքրված հայտատուների հարցերին պատասխանելու և հայտի վերաբերյալ պարզաբանումներ տալու համար: Հանդիպումից հետո կկազմվի արձանագրություն՝ հանդիպման ընթացքում հնչեցված բոլոր հարցերի և պատասխանների վերաբերյալ, և այն կհրապարակվի ԳԱՏՕ ծրագրի կայքէջում՝ [www.aspired.wadi-mea.com](http://www.aspired.wadi-mea.com):

**2. Ուլքեր կարող են մասնակցել:** Ի պատասխան սույն ՀՆՀ-ի հայտեր կարող են ներկայացնել **հայաստանյան** ինժեներական նախագծային կազմակերպությունները, որոնք ունեն համապատասխան տեխնիկական որակավորում ու նմանատիպ ծրագրերի իրականացման փորձ, բավարարում են սույն ՀՆՀ-ի բոլոր պահանջներին, գրանցված են Հայաստանում և

ընդգրկված չեն ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից արգելված, կասեցված կամ արգելման համար առաջարկված կազմակերպությունների ցուցակում:

**3. Տեխնիկական առաջարկ:** Հետաքրքրված հայտատուները պետք է ներկայացնեն.

1. Հայտատուի կարողությունների համառոտ նկարագրություն, որը ցուցադրում է Հայտատուի տեխնիկական որակավորումը և նմանատիպ ծավալի ու բարդության ծրագրերի համար աշխատանքների իրականացման փորձը.
2. աշխատանքների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր լիցենզիաների և թույլտվությունների պատճենները,
3. առնվազն երեք պատվիրատուների կոնտակտային տվյալները (հեռախոսահամար, էլ. փոստի հասցե, կազմակերպության հասցե)՝ հայտատուի տրամադրած ապրանքների և ծառայությունների վերաբերյալ կարծիք հարցնելու համար:

**4. Գնառաջարկ:** Հետաքրքրված հայտատուները պետք է ներկայացնեն.

1. Հայտատուի բանկային և կոնտակտային տվյալները, ներառյալ էլ.փոստի հասցեն.
2. Գնառաջարկ՝ լրացված ըստ Հավելված Ա-ում՝ «Գնառաջարկ» տրված ձևաչափի, ստորագրված և կնքված: Հայտատուները պետք է երաշխավորեն, որ գնառաջարկի բոլոր գնային տարրերը ճշգրիտ ու խելամիտ են.
3. Գնառաջարկը պետք է ներկայացվի հայկական դրամով (ՀՀ դրամ).
4. ԳԱՏՕ ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից և, որպես այդպիսին, ազատված է ԱԱՀ-ից: Առաջարկվող գինը չպետք է ներառի ԱԱՀ-ն:

**5. Հարցեր/պարզաբանումներ:** Սույն ՀՆՀ-ի վերաբերյալ բոլոր հարցերը և (կամ) պարզաբանումները պետք է տրվեն **մինչև նախամրցութային հանդիպումը**, էլ. փոստով՝ ուղարկելով [aspired@engl.com](mailto:aspired@engl.com) հասցեով: **Ոչ մի հեռախոսազանգ չի ընդունվի սույն ՀՆՀ-ի վերաբերյալ:**

**6. Ծառայությունների նկարագրություն և Տեխնիկական առաջադրանք**

**Ընդհանուր տեղեկություններ:** Արմավիրի մարզի Եղեգնուտ և Առատաշեն գյուղերի ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագրի շրջանակում նախատեսվում է ջրամատակարարման ծառայությունների որակի բարելավում, մասնավորապես.

1. ջրամատակարարման ցանցերի վերանորոգում՝ օգտագործելով պոլիէթիլենային խողովակներ ու կցամասեր.
2. փոփոխական հաճախականությամբ շարժիչներով որակյալ խորքային պոմպերի տեղադրում՝ հորատանցքերից ջրի մղման համար.
3. քլորակայանների կառուցում և հիպոքլորիդի լուծույթով աշխատող քլորացման սարքավորումների տեղադրում:

**Տեխնիկական առաջադրանք:** Տեխնիկական առաջադրանքը կազմված է երկու հիմնական բաղադրիչից՝ ինժեներական նախագծերի պատրաստում և շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում: Երկու բաղադրիչները մասնավորապես ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

## I. ԻՆՏԵՆՏԻՎԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

1. Հաղթող ճանաչված հայտատուի հետ կկնքվի պայմանագիր երկու գյուղերի ջրամատակարարման համակարգերի և առնչվող ենթակառուցվածքների ինժեներական նախագծերի պատրաստման համար: Ինժեներական նախագծերի պատրաստման փուլը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալ հիմնական գործողությունների իրականացմամբ.
  - 1.1 Գեոդեզիական հետազոտություն՝ բացարձակ նիշերի որոշմամբ, ջրամատակարարման համակարգի(ցանցի) կառուցման և վերակառուցման նախագծերի համար.
  - 1.2 Ենթակառուցվածքների (կապի), հաղորդակցման գծերի (գազի խողովակներ, էլեկտրական, հեռահաղորդակցման մալուխներ, ջրի խողովակներ) հետ հատման վերաբերյալ գրավոր համաձայնության ձեռքբերում կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների (օպերատորների) հետ: Թափոնների տեղադրման վայրերի, հողի ձեռքբերման և այլ հարցերի շուրջ գրավոր համաձայնության ձեռքբերում վարչական մարմինների հետ.
  - 1.3 Ասֆալտապատ հատվածները քանդելու և վերականգնելու կապակցությամբ համաձայնության ձեռքբերում տեղական ինքնակառավարման մարմինների հետ.
  - 1.4 Ջրամատակարարման խողովակների տեղադրման, կոյուղագծերի անցկացման նպատակով, ըստ անհրաժեշտության, հիմնական ճանապարհների հատման վերաբերյալ համաձայնության ձեռքբերում, թույլտվությունների ստացում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից, համայնքներից.
  - 1.4.1 Նոր ջրագծերի կառուցման նպատակով՝ հողի ձեռքբերման և նոր ջրագծերի կառուցման հետ կապված այլ համաձայնությունների ձեռքբերում սեփականատերերի հետ.
  - 1.5 Նախագծված բոլոր ջրագծերի համար խրամուղիների հիմքերի և կառուցվածքների երկրատեխնիկական հետազոտություն.
  - 1.6 Ըստ տեխնիկական բնութագրերի՝ մանրամասն նախագծային գծագրերի պատրաստում՝ տրամադրելով առնչվող տվյալներ ու տեղեկություններ, այդ թվում՝ պահանջվող չափանիշները, նյութերի ընտրությունը, նախագծային պարամետրերը, նախագծային(հիդրավլիկ,Վկառուցվածքային) հաշվարկները: Նախագծերը պետք է լինեն տեղայնացված.
  - 1.7 Ինժեներական նախագծի ծավալաթերթի, տեխնիկական բնութագրերի և ծախսերի նախահաշվի կազմում.
  - 1.8 Նախագիծն ավարտելուց հետո Նախագծողը պետք է իր միջոցներով ստանա տեխնիկական փորձաքննության դրական եզրակացություն.

Մանրամասն նախագծային փաթեթում պետք է ընդգրկված լինեն հետևյալ փաստաթղթային կապոցները.

1-ին փաստաթղթային կապոց՝ Ընդհանուր դրույթներ և բացատրական մաս

2-րդ փաստաթղթային կապոց՝ Տեխնիկական բնութագրեր

3-րդ փաստաթղթային կապոց՝ Մանրամասն նախագծային գծագրեր

4-րդ փաստաթղթային կապոց՝ Ծավալաթերթ

5-րդ փաստաթղթային կապոց՝ Ծախսերի նախահաշիվ

## **1-ին փաստաթղթային կապոց՝ Ընդհանուր դրույթներ և բացատրական մաս**

Բացի ընդհանուր բացատրական մասից ու հաշվարկներից՝ կապոցում պետք է ընդգրկված լինեն.

- սարքավորումների չափումների տվյալները, թերությունների վերաբերյալ ակտը, հղումային նշանների ցանկը,
- խորհրդատվական հանդիպումների արձանագրությունները,
- փորձագիտական եզրակացություններ, օր.՝ ինժեներական, երկրաբանական, հիդրոերկրաբանական և այլն (նյութերի, սարքավորումների ստուգման և այլ նպատակներով),
- ենթակառուցվածքների (կապի), հաղորդակցման գծերի (գազի խողովակներ, էլեկտրական, հեռահաղորդակցման մալուխներ, ջրի խողովակներ) հետ հատման վերաբերյալ գրավոր համաձայնությունը կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների (օպերատորների) հետ, շինարարական թափոնների տեղադրման վայրերի, հողի ձեռքբերման և այլ հարցերի շուրջ գրավոր համաձայնությունը վարչական մարմինների հետ,
- տեխնիկական փորձաքննության եզրակացությունը:

## **2-րդ փաստաթղթային կապոց՝ Տեխնիկական բնութագրեր**

Տեխնիկական բնութագրերում պետք է նշված լինեն ընդհանուր աշխատանքի կատարման մանրամասները, որոնք գծագրերում ներառված չեն: Տեխնիկական բնութագրերում պետք է սահմանված լինեն ժամկետները, ապահովագրման պահանջները, թույլտվությունները և այլ հատուկ ընթացակարգերը:

Բնութագրերը պետք է ներառեն պայմանագրերի տեխնիկական դրույթները, ինչպես նաև տվյալ պայմանագրին հատուկ ոչ-տեխնիկական հոդվածները: Դրույթները պետք է բաժանված լինեն երկու խմբի՝ մեկը ընդհանուր պահանջների, մյուսը տեխնիկական բնութագրերի մասով:

Խողովակների, սարքավորումների, կցամասերի տեխնիկական բնութագրերը պետք է ներկայացվեն առանձին ենթաբաժիններով՝ ըստ տվյալ փաթեթում ընդգրկված սարքավորում(ներ)ի, տեխնիկական ու հիդրավլիկ պարամետրերի հետ միասին:

Տեխնիկական բնութագրերի վերջում, ըստ հավելվածում նշված ձևի, պետք է ներկայացվեն մեքենաների, սարքավորումների ցանկը և շինարարական աշխատանքների համար պահանջվող անձնակազմը:

## **3-րդ փաստաթղթային կապոց՝ Մանրամասն նախագծային գծագրեր**

Ներկայացվող գծագրերի, դրանց տեսակի, քանակի, մասշտաբների և հետազոտության վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացված են Հայաստանի

Հանրապետությունում գործող շինարարական ստանդարտներում, նորմերում, կանոններում: Ըստ մանրամասն նախագծի պատրաստված գծագրերի փաթեթը պետք է ներառի հետևյալը.

- Ջրամատակարարման համակարգերի և վերանորոգվող կամ նոր նախագծվող, շահագործումից հանվող ջրագծերի բաշխիչ ցանցերի քարտեզները, այդ թվում՝
  - ցանցերի (բաշխիչ համակարգերի) մանրամասն սխեմաները՝ տարբեր մասշտաբներով,
  - խողովակաշարերի երկայնական պրոֆիլները՝ ըստ անհրաժեշտության,
  - խողովակաշարերի լայնակի կտրվածքները՝ ըստ անհրաժեշտության.
- Մանրամասն գծագրեր և սխեմաներ՝ տեխնոլոգիական կառուցվածքների և դրանց տարրերի հստակ նկարագրությամբ և չափումներով.
  - շինարարական աշխատանքների մանրամասն գծագրեր (պոմպակայաններ, փականային արկղեր և այլն)՝ տարբեր հատվածներում և մասշտաբներով (1:50 և (կամ) 1:25),
  - ամրացման և կաղապարման սխեմաներ շինարարական աշխատանքների համար՝ (1:50 և (կամ) 1:25) մասշտաբով:

Նախագծային գծագրերի հիմնական հաշվարկները պետք է ներկայացվեն բացատրական մասի համապատասխան բաժիններում: Գծագրերի հետ կապված աշխատանքների նկարագրությունը, նշումները և ծավալաթերթը չպետք է ներառեն շինարարության կազմակերպման հետ կապված լրացուցիչ գործողությունները, աշխատանքի իրականացման տեխնոլոգիական գծագրերը/սխեմաները (որը նշանակում է նոր համակարգերի տեղադրումից հետո հաջորդական աշխատանքների իրականացում նախկինում գոյություն ունեցող համակարգերի ապամոնտաժման ուղղությամբ), շահագործման աշխատանքները և այլն: Նման աշխատանքները պետք է ներառված լինեն աշխատանքների միավոր գնի մեջ:

#### **4-րդ փաստաթղթային կապոց՝ Ծավալաթերթ**

Ծավալաթերթի հետ մեկտեղ պետք է տրամադրվեն անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ և ծառայություններ, որոնց ճշգրիտ սահմանումը թույլ կտա, որպեսզի շինարարական ընկերությունները հստակ պատկերացում կազմեն ու գնահատեն իրականացվող աշխատանքների ծավալը և ծախսերը:

#### **5-րդ փաստաթղթային կապոց՝ Ծախսերի նախահաշիվ**

Շինարարական աշխատանքների նախահաշիվները պետք է կազմվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարության նորմերին համապատասխան: Նախահաշիվներում պետք է առանձին նշված լինեն շինարարական/տեղադրման աշխատանքների և սարքավորումների գները: Ծախսերի նախահաշիվը պետք է ներառի նաև աշխատանքների իրականացման լրիվ շրջանակը, նախագծային գծագրերով նախատեսված սարքավորումների և կցամասերի արժեքները, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված մաքսային ծախսերը, հարկերը, և չնախատեսված ծախսերը (որոնք կարող են օգտագործվել հիմնական ռիսկի գործոնների, օր.՝ արտարժույթի փոխարժեքների, ներմուծման և այլ չնախատեսված, հիմնավորված ռեպլերում):

#### **Վերջնական ինժեներական նախագիծը**



Ինժեներական նախագիծը կհամարվի ավարտուն փորձագետների կողմից ուսումնասիրված նախագծային փաթեթը հանձնելուց և ME&A, Inc. (ME&A) ընկերության կողմից հաստատելուց հետո:

**II. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Շինարարությունն սկսելու պահից Նախագծողը պետք է մատուցի շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություններ՝ համաձայն ՀՀ օրենսդրության և առնչվող իրավական ակտերի պահանջների, որ սահմանված են նման աշխատանքների համար: Նախագծողն իր դերն իրականացնում է՝ համաձայն ՀՀ Քաղաքաշինության նախարարության 1998թ. սեպտեմբերի 28-ի N 143 հրամանի, որը վերաբերում է շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացմանը:

7. **Կատարման ժամկետը:** Աշխատանքների կատարման առավելագույն ժամկետը սահմանվում է 50 օրացուցային օր, որը հաշվարկվում է պայմանագիրը ստորագրելու պահից: Աշխատանքները նախատեսվում է սկսել 2018թ.-ի օգոստոսի 20-ին և ավարտել 2018թ.-ի հոկտեմբերի 9-ին: Հաղթող ճանաչված հայտատուն աշխատանքների ավարտն ուշացնելու դեպքում պարտավոր է ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար վճարել տույժ՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.2 (զրո ամբողջ երկու) տոկոսի չափով, սակայն ոչ ավելի քան դրա 10 (տաս) տոկոսը, բացառությամբ, եթե ուշացումը հաղթող ճանաչված հայտատուի վերահսկողությունից դուրս գտնվող անսպասելի կամ ֆորս մաժորային հանգամանքների արդյունք է:
8. **Պայմանագրի տեսակը:** ME&A-ն հաղթող կազմակերպության հետ կկնքի հաստատուն ֆիքսված գնով պայմանագիր: Պայմանագիրն իր ձևաչափով կհամապատասխանի ԱՄՆ ՄՁԳ պահանջներին և կներառի ԱՄՆ ՄՁԳ-ի պարտադիր պայմանագրային դրույթները:
9. **Վճարման ժամանակացույցը:** Յուրաքանչյուր բաղադրիչի աշխատանքների դիմաց վճարումը կկատարվի տվյալ բաղադրիչի մասով Տեխնիկական առաջադրանքի բոլոր տարրերը կատարելուց, ԳՍՏՕ ծրագրի և հայտատու կազմակերպության ներկայացուցիչների կողմից Ընդունման ակտը ստորագրելուց, պատշաճ ձևով կազմված հաշիվ-ապրանքագիրը ստանալուց հետո՝ երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում:

Պայմանագրի գնի (Հավելված Ա-ում տրված ձևաչափով) I (I.1 և I.2) բաղադրիչի համար վճարումը կկատարվի I բաղադրիչի բոլոր աշխատանքների ավարտից և ME&A-ի ընդունումից հետո: II բաղադրիչի վճարումը կկատարվի II բաղադրիչի շրջանակում շինարարության նկատմամբ հսկողության բոլոր ծառայությունների ավարտից և ME&A-ի ընդունումից հետո:

ME&A-ն իրավունք է վերապահում մերժելու մատուցված ծառայությունների ընդունումը, եթե որակը չի համապատասխանում Պայմանագրի պահանջներին:

10. **Հայտի վավերականության ժամկետը:** Հայտերը պետք է ուժի մեջ լինեն դրանց ներկայացման

վերջնաժամկետի օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում:

11. **Գնահատում և պայմանագրի շնորհում:** Պայմանագիր է շնորհվում այն հայտատուին, որն ունի ամենաբարձր տեխնիկական որակավորումը, փորձը, բավարարում է ՀՆՀ-ի բոլոր պահանջներին և ներկայացնում է խելամիտ գնառաջարկ, որն ամենաօգտակարն է ծրագրի համար: Պայմանագիրը կնքելուց առաջ ME&A-ն իրավունք ունի բանակցություններ վարելու, պարզաբանումներ պահանջելու կամ մերժելու ցանկացած կամ բոլոր հայտերը: Եթե ամենաբարձր որակավորումն ունեցող հայտատուի հետ բանակցություններն արդյունք չեն տալիս, ապա ME&A պետք է դադարեցնի ու բանակցություններ սկսի երկրորդ տեղը զբաղեցնող հայտատուի հետ:
12. **Տվյալների համարակալման ունիվերսալ համակարգ (DUNS):** Կազմակերպության համար պարտադիր պահանջ է հանդիսանում DUNS-ի համարը ME&A-ին տրամադրելը: Տվյալների համարակալման ունիվերսալ համակարգը մշակվել և կարգավորվում է «Dun & Bradstreet» (D&B) ընկերության կողմից: Ըստ այդ համակարգի՝ յուրաքանչյուր ընկերությանը վերագրվում է եզակի թվային նույնականացման համար, այսուհետ՝ «DUNS համար»: DUNS համարի բացակայության դեպքում ME&A-ն չի կարող հայտատուին դիտարկել որպես նրա հետ «պատասխանատու» բիզնես վարելու միավոր և, հետևաբար, ME&A-ն պայմանագիր/գնման պատվեր կամ դրամական համաձայնագիր չի կնքի նման կազմակերպության հետ: Հայտատուն սույն ՀՆՀ-ի հաղթող կճանաչվի միայն ME&A-ին DUNS համարը տրամադրելուց հետո: DUNS համար չտրամադրող հայտատուները մրցույթից դուրս կմնան, և ME&A-ի կողմից կընտրվի հաջորդ համապատասխանող հայտատուն:

Բոլոր ԱՄՆ և օտարերկրյա կազմակերպությունները, որոնք ստանում են 25,000 ԱՄՆ դոլար և ավելի բարձր արժողությամբ առաջնային պայմանագիր/գնման պատվեր կնքելու հնարավորություն, պարտավոր են պայմանագիրը կնքելուց առաջ ստանալ DUNS համար: Կազմակերպություններն ազատվում են այս պահանջից, եթե բոլոր աղբյուրներից նրանց ստացած համախառն եկամուտը նախորդ ֆինակալ տարում ցածր է եղել 300,000 դոլարից: Նման հիմքով ազատվելու համար ME&A-ն հայտատուից պահանջում է ստորագրել ինքնահավաստագիր:



**Հայտ ներկայացնելու հրավեր (ՀՆՀ)  
# 010818-01**

**Եղեգնուտ և Առատաշեն գյուղերի ջրամատակարարման համակարգի  
բարելավման ծրագիր**

**Գնառաջարկ**

N	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳԻՆ (ՀՀԴ)
I.1	Եղեգնուտ գյուղի ջրամատակարարման համակարգի ինժեներական նախագծի պատրաստում	
I.2	Առատաշեն գյուղի ջրամատակարարման համակարգի ինժեներական նախագծի պատրաստում	
II	Եղեգնուտ և Առատաշեն գյուղերի համար նախագծված ենթակառուցվածքների շինարարության ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում	
	<b>ԸՆԴԱՄԵՆ՝</b>	

[կազմակերպության անվանումը] [տնօրենի անունը և ստորագրությունը] [կնիքը]



**ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԱՄՆ ՄԶԳ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Մաս I. ԱՄՆ ՄԶԳ թիվ AID-OAA-I-14-00070 IDIQ պայմանագրից վերցված դրույթներ**

**ԲԱԺԻՆ Ի. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

**Ի.1. ՀՂՈՒՄՆԵՐՈՎ ՆԵՐԱՌՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

Այս բաժնին վերաբերող հետևյալ պայմանագրային դրույթները ներառված են հղումներով (հղումի համար, անվանում, ամսաթիվ)՝ համաձայն սույն պայմանագրի Բաժին I-ում սահմանված «ԴԱՇՆԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ 52.252-2 ՀՂՈՒՄՆԵՐՈՎ ՆԵՐԱՌՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐ» (FAR 52.252-2 CLAUSES INCORPORATED BY REFERENCE) կետի: Դրույթի ամբողջական շարադրանքը էլեկտրոնային տարբերակով տե՛ս <https://www.acquisition.gov/FAR/> կայքէջում:

<u>ՀԱՄԱՐ</u>	<u>ԱՆՎԱՆՈՒՄ</u>	<u>ԱՄՍԱԹԻՎ</u>
AIDAR 752.7027	ԱՆՁՆԱԿԱԶՄ	1990թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ

**Ի.10. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ. ՈՐՈՇԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆԽՈՒՄ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ (IDIQ պայմանագիր) (Գնահատման ծառայություններ)**

(բ) Ի լրումն, ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ՝ ԿԱՊԱԼԱՌՈՒՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄԵԿ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՈՐԵՎԷ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԿԱՄ ՉԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՈՐԵՎԷ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿԱՄ ԾՐԱԳԻՐ ՇԱՀԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԻՄ:

(գ) Եթե սույն գնահատումը կատարելիս կապալառուն ստանում է այլ ընկերություն(ների) սեփականությունը հանդիսացող տեղեկատվություն, ապա կապալառուն պետք է համաձայնի այլ ընկերություն(ների) հետ պաշտպանել նրանց տեղեկատվությունը չարտոնված օգտագործումից կամ բացահայտումից, քանի դեռ այն հանդիսանում է տվյալ ընկերություն(ների) սեփականությունը, և զերծ մնա նախատեսված նպատակից բացի որևէ այլ նպատակով այդ տեղեկատվությունն օգտագործելուց: ԿԱՊԱԼԱՌՈՒՆ ՊԵՏՔ Է ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՐՆ ՏՐԱՄԱԴՐԻ ՆՄԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԻ ՊԱՇՏԱՃ ԶԵՎՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՏՃԵՆԸ:



**H.11. ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՀՐԱՄԱՆ (2002Թ. ՓԵՏՐՎԱՐ)**

Կապալառուին/կատարողին հիշեցվում է, որ ԱՄՆ գործադիր հրամաններով և օրենսդրությամբ արգելվում են գործարքներ, ինչպես նաև ռեսուրսների տրամադրում և աջակցություն այն անհատներին և կազմակերպություններին, որոնք առնչվում են ահաբեկչության հետ: Նշված գործադիր հրամանների և օրենսդրության պահանջների կատարման երաշխավորումը օրենքով Կապալառուի պատասխանատվությունն է: Այս դրույթը պետք է ներառել սույն պայմանագրի շրջանակներում տրամադրվող բոլոր ենթակապալի պայմանագրերում/ենթապայմանագրերում:

**H.17. ԱՄՆ ՄԶԳ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ . ԳՆՈՒՄՆԵՐ (2004Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ)**

(ա) ԱՄՆ ՄԶԳ Հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանության քաղաքականության նպատակներն են՝ (1) սատարել Ամերիկայի Միացյալ Նահանգների օտարերկրյա օգնության ծրագրերի նպատակների իրագործմանը՝ խթանելով հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը և հավասար հնարավորությունների ընձեռումը ԱՄՆ ՄԶԳ քաղաքականության, պետական և ոլորտային ռազմավարությունների, ինչպես նաև ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներում, (2) բարձրացնել իրազեկությունը հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների շուրջ՝ ինչպես ԱՄՆ ՄԶԳ ծրագրերում, այնպես էլ այն երկրներում, որտեղ իրականացվում են այդ ծրագրերը, (3) ներգրավել այլ ԱՄՆ պետական կառույցներին, տեղական գործընկեր կազմակերպություններին, կառավարություններին, ծրագրեր իրականացնող և այլ դոնոր կազմակերպություններին՝ խթանելու հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը բացառող միջավայրը, (4) օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությանը՝ միջազգային մակարդակով: Քաղաքականության արողջական փաստաթուղթը կարող էք տեսնել <http://www.usaid.gov/about/disability/DISABPOL.FIN.html>. կայքէջում:

(բ) Հետևաբար, ԱՄՆ ՄԶԳ-ն կապալառուից պահանջում է ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի իրականացման ընթացքում խտրականություն չլիքառել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ և սույն պայմանագրի կատարման ընթացքում ամեն ջանք գործադրել ԱՄՆ ՄԶԳ Հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանության քաղաքականության նպատակների իրագործման համար: Ելնելով նշվածից և պայմանագրի շրջանակներից՝ կապալառուն պետք է հաշմանդամություն ունեցող տղամարդկանց, կանանց և երեխաների ներառման համապարփակ և հետևողական մտեցում ցուցադրի իր գործողություններով:

**H.19. AIDAR 752.225-70 - Ծագման աղբյուրի և ազգային պատկանելության հետ կապված պահանջներ (2012Թ. ՓԵՏՐՎԱՐ)**

(ա) Բացառությամբ պայմանագրերի գծով պատասխանատուի կողմից հաստատված կոնկրետ դեպքերի՝ բոլոր ապրանքները (օր.՝ սարքավորումներ, նյութեր, փոխադրամիջոցներ, պաշարներ) և ծառայությունները (ներառյալ ապրանքների փոխադրման ծառայությունները)

Կապալառուն պետք է գնի՝ համաձայն թիվ 22 Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի (CFR, Code of Federal Regulations) 228-րդ մասի՝ «ԱՄՆ ՄԶԳ-ի դաշնային ծրագրային միջոցներով ֆինանսավորվող ապրանքների և ծառայությունների գնման կանոններ», պահանջների: Գնումների թույլատրելի աղբյուրը 937 աշխարհագրական կոդն է, եթե այլ բան նախատեսված չէ սույն պայմանագրի ժամանակացույցով: Կոնկրետ ապրանքների կամ ծառայությունների ընտրության իրավասության հետ կապված խորհրդատվություն կարող էք ստանալ պայմանագրերի գծով պատասխանատուից:

(բ) Չթույլատրված ապրանքներ և ծառայություններ: Կապալառուն չպետք է սույն պայմանագրի շրջանակում գնի հետևյալ ապրանքները կամ ծառայությունները.

- (1) ռազմական տեխնիկա,
- (2) հսկողության սարքավորումներ,
- (3) ոստիկանությանը և այլ իրավապահ մարմինների գործողություններին աջակցելու համար ապրանքներ և ծառայություններ,
- (4) աբորտի գործիքներ և ծառայություններ,
- (5) շքեղ ապրանքներ, դրամախաղային մեքենաներ կամ
- (6) եղանակային պայմանների փոփոխման սարքավորումներ:

(գ) Սահմանափակված ապրանքներ: Հետևյալ ապրանքները կամ ծառայությունները գնելիս Կապալառուն պետք է պայմանագրերի գծով պատասխանատուից ստանա նախօրոք գրավոր համաձայնություն կամ հետևի կիրառելի ազատման արտոնությամբ պահանջվող ընթացակարգերին, եթե նման արտոնություն շնորհվել է պայմանագրերի գծով պատասխանատուի կողմից.

- (1) գյուղատնտեսական ապրանքներ,
- (2) շարժիչային տրանսպորտային միջոցներ,
- (3) դեղեր և հակաբեղմնավորիչ միջոցներ,
- (4) պեստիցիդներ,
- (5) պարարտանյութ,
- (6) օգտագործված սարքավորումներ կամ
- (7) ԱՄՆ կառավարության սեփականությունը հանդիսացող ավելցուկային գույք:

Եթե ԱՄՆ ՄԶԳ-ն որոշի, որ Կապալառուն, առանց պայմանագրերի գծով պատասխանատուից նախապես գրավոր թույլտվություն ստանալու, սույն պայմանագրի շրջանակներում գնել է վերոնշյալ սահմանափակված ապրանքներից որևէ մեկը կամ որ Կապալառուն չի հետևում պայմանագրերի գծով պատասխանատուի շնորհած և կիրառելի ազատման արտոնությամբ պահանջվող ընթացակարգերին և որ վճարում է ստացել նման նպատակներով, ապա պայմանագրերի գծով պատասխանատուն կարող է Կապալառուից պահանջել գնման ամբողջ գումարի փոխհատուցում:

## **H.25. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԱՐԳԵԼՔ**

ԱՄՆ ՄԶԳ-ն իրավունք է վերապահում դադարեցնելու սույն պայմանագիրը, պահանջելու փոխհատուցում կամ ձեռնարկելու համապատասխան այլ միջոցառումներ, եթե պարզվի, որ Կապալառուն դատապարտված է եղել թմրանյութերի հետ կապված հանցագործության մեջ կամ ներգրավված է եղել թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ՝ թիվ 22 Դաշնային



կանոնակարգերի օրենսգրքի (CFR) 140-րդ մասով սահմանված կարգով:

**H.26. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ**

Հիմնականում դաշնային կապալառուներին օրենքով և ենթաօրենսդրական ակտերով արգելված է խտրականություն կիրառել ռասայի, մաշկի գույնի, կրոնի, սեռի, ազգային պատկանելության, հաշմանդամության, տարիքի, գենետիկ հատկանիշների կամ վետերանի կարգավիճակի կապակցությամբ, եթե նրանց պայմանագրով նախատեսված աշխատանքը կատարվում է ԱՄՆ-ում կամ աշխատողները վարձվում են ԱՄՆ-ից: Դաշնային պայմանագրերի համար կիրառելի պահանջները կարող եք գտնել Դաշնային գնումների կանոնակարգի (FAR) 22-րդ մասում՝ «Աշխատանքային օրենքների կիրառումը պետական գնումների նկատմամբ», ինչպես նաև նույն կանոնակարգի 52.227 մասով նախատեսված դրույթներում:

Չնայած նրան, որ պարտադիր պահանջ չէ, Գործակալությունը խրախուսում է ԱՄՆ ՄԶԳ պայմանագրերի շրջանակներում աշխատող բոլոր կազմակերպություններին, ներառյալ բացառապես արտերկրում գործունեություն իրականացնող կազմակերպություններին, նույն չափորոշիչները կիրառել նաև այլ հիմքերով խտրականությունը բացառելու համար, այդ թվում՝ սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, հղիության և ցանկացած այլ վարքի, որ բացասաբար չի ազդում կատարողականի վրա՝ համաձայն գործող օրենսդրության:

**(ԲԱԺԻՆ H-Ի ՎԵՐՋ)**

**ԲԱԺԻՆ I. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**I.1 FAR 52.252-4 ՀՂՈՒՄՆԵՐՈՎ ՆԵՐԱՌՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

Սույն պայմանագրում հղումներով ներառված են մեկ կամ ավելի դրույթներ, որոնք ունեն նույն ուժը և ազդեցությունը, ինչ ամբողջական շարադրման դեպքում: Ըստ անհրաժեշտության՝ նշված դրույթների ամբողջական շարադրանքը կարող է տրամադրվել պայմանագրերի գծով պատասխանատուի կողմից: Դրանք նաև առկա են էլեկտրոնային տարբերակով հետևյալ կայքէջ(եր)ում.

- <https://acquisition.gov/far/>
- [http://www.usaid.gov/sites/default/files/documents/1868/aidar\\_0.pdf](http://www.usaid.gov/sites/default/files/documents/1868/aidar_0.pdf)

**Դաշնային գնումների կանոնակարգի (FAR) դրույթներ՝**

<b><u>ՀԱՄԱՐ</u></b>	<b><u>ԱՆՎԱՆՈՒՄ (ԱՄՍԱԹԻՎ)</u></b>
52.202-1	Սահմանումներ (2013թ. ՆՈՅԵՄԲԵՐ)
52.203-6	Կառավարությանը ենթակապալառուների կողմից վաճառքի սահմանափակումներ (2016թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ)
52.203-17	Կապալառուի աշխատողների տեղեկություն տալու իրավունքները և տեղեկություն

- տալու իրավունքների մասին աշխատողներին իրազեկելու վերաբերյալ պահանջը (2014թ. ԱՊՐԻԼ)
- 52.209-6 Արգելված, կասեցված կամ արգելման համար առաջարկված կապալառուների հետ ենթակապալի պայմանագիր կնքելիս պետական շահի պաշտպանում (2013թ. ՕԳՈՍՏՈՍ)
- 52.215-2 Աուդիտ և տվյալների բանակցում (2010թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ)
- 52.222-26 Հավասար հնարավորություններ (2007թ. ՄԱՐՏ)
- 52.222-36 Հաշմանդամություն ունեցող աշխատողների համար նախատեսված դրական միջոցառումներ (2010թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ)
- 52.222-50 Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար (2015թ. ՄԱՐՏ)
- 52.223-6 Աշխատավայրում թմրանյութերի բացառում (2001թ. ՄԱՅԻՍ)
- 52.225-13 Որոշ օտարերկրյա գնումների վրա սահմանափակումներ (2008թ. ՀՈՒՆԻՍ)
- 52.227-3 Արտոնագրային երաշխիք (1984թ. ԱՊՐԻԼ)
- 52.227-11 Կապալառուի արտոնագրային իրավունքները (2014թ. ՄԱՅԻՍ)
- 52.227-14 Իրավունքներն ըստ տվյալների, ընդհանուր (2014թ. ՄԱՅԻՍ)
- 52.242-1† Ծախսերը չթույլատրելու մտադրության մասին ծանուցում (1984թ. ԱՊՐԻԼ)
- 52.247-63 Նախապատվություն ԱՄՆ-ի կողմից հավաստագրված ավիափոխադրողներին (2003թ. ՀՈՒՆԻՍ)
- 52.249-2\* Դադարեցում՝ ըստ Կառավարության հայեցողության (հաստատուն գնով պայմանագիր) (2012թ. ԱՊՐԻԼ)

\* Կիրառվում է միայն հաստատուն գնով պայմանագրերի համար:

† Կիրառվում է միայն ծախսային փոխհատուցմամբ պայմանագրերի համար:

**(ԲԱԺԻՆ I-Ի ՎԵՐՁ)**

**Մաս II. ԳՄՍՕ ծրագրի թիվ AID-111-TO-15-00001 հիմնական պայմանագրից վերցված դրույթներ**

**ԲԱԺԻՆ Կ. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

Սույն ծրագրի պայմանագիրը տրվում է «Մենդեզ Ինգլանդ ընդ Աստուիեթս» ընկերությանը՝ Water and Development IDIQ (WADI) IDIQ թիվ AID-OAA-I-14-00070 պայմանագրի շրջանակներում:

IDIQ պայմանագրում հղումներով կամ ամբողջական շարադրանքով նախատեսված բոլոր պայմանագրային դրույթները համապատասխան դեպքերում կիրառելի են սույն ծրագրի պայմանագրի նկատմամբ:

Բացի դրանից՝ սույն ծրագրի պայմանագրում ներառված են հետևյալ դրույթները.

**Կ.1. ՀՂՈՒՄՆԵՐՈՎ ՆԵՐԱՌՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**



**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

Այս բաժնին վերաբերող հետևյալ պայմանագրային դրույթները ներառված են հղումներով (հղումի համար, անվանում, ամսաթիվ)՝ համաձայն սույն պայմանագրի Բաժին I-ում սահմանված «ԴԱՇՆԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ 52.252-2 ՀՂՈՒՄՆԵՐՈՎ ՆԵՐԱՌՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐ» (FAR 52.252-2 CLAUSES INCORPORATED BY REFERENCE) կետի: <http://farsite.hill.af.mil/> կայքում էլեկտրոնային տարբերակով տե՛ս Դաշնային գնումների կանոնակարգի (FAR), իսկ [https://www.usaid.gov/sites/default/files/documents/1868/aidar\\_0.pdf](https://www.usaid.gov/sites/default/files/documents/1868/aidar_0.pdf) կայքում ԱՄՆ ՄԶԳ-ի Գնումների կանոնակարգի (AIDAR) դրույթների ամբողջական շարադրանքը:

ՀԱՄԱՐ	ԱՆՎԱՆՈՒՄ	ԱՄՍԱԹԻՎ
	ԴԱՇՆԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (թիվ 48 Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի (CFR) Գլուխ 1)	
52.228-3	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄ 2014Թ. ՀՈՒԼԻՍ (ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏ)	
52.227-14	ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՏՎՅԱԼՆԵՐԻ. ԸՆԴՀԱՆՈՒՐ 2014Թ. ՄԱՅԻՍ	
	ԱՄՆ ՄԶԳ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (AIDAR)	
752.245-71	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ 1984Թ. ԱՊՐԻԼ	
752.7027	ԱՆՁՆԱԿԱԶՄ 1990Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ	

**H.2 ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՈՂ**

Սույն պայմանագրի շրջանակներում ապրանքների և ծառայությունների գնման համար թույլատրելի աշխարհագրական կողերն են՝ 937 և 110:

(ԲԱԺԻՆ H-Ի ՎԵՐՋ)

## ՀԱՎԵԼՎԱԾ Գ: ԲՐԵՆՊԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱԳՆՇՄԱՆ ՊԼԱՆՆԵՐ

### Բրենդավորման ռազմավարություն

«Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳUSO) ծրագրի հիմնական նպատակն է աջակցել ԱՄՆ ՄՁԳ հայաստանյան առաքելությանը օժանդակելու Հայաստանում ջրային ռեսուրսների կայուն կառավարմանը և ջրօգտագործողների կողմից առաջադեմ փորձի կիրառմանը՝ գիտական, տեխնոլոգիական, նորարարական նախաձեռնությունների և շահագրգիռ կողմերի հետ համագործակցության միջոցով: ԳUSO ծրագրի բրենդավորման ռազմավարության հիմքում ընկած է հետևյալ ուղերձը՝ «*Մյս օգնությունը Ամերիկայի ժողովրդի կողմից է:*»:

**Ծրագրի անվանումը**՝ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳUSO)

**Անգլերեն**՝ “Advanced Science and Partnerships for Integrated Resource Development” (ASPIRED)

ME&A-ն ԱՄՆ ՄՁԳ-ի նույնականացման նշանը կօգտագործի ծրագրային նյութերում և հաղորդակցության մեջ, ըստ անհրաժեշտության, հայերեն թարգմանելով «Ամերիկայի ժողովրդի կողմից» կարգախոսը:

**Ցանկալի չափով տեսանելիություն.** ME&A-ն կերաշխավորի, որ ԳUSO ծրագիրը լայն տեսանելիություն ունենա ծրագրի շահառուների և նրանց համայնքների, գործընկերների և հանրության լայն շրջանակներում՝ կենտրոնանալով Հայաստանի Հանրապետության կառավարության, համայնքների ղեկավարության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի վրա: Խորհրդակցելով ԱՄՆ ՄՁԳ-ի հետ՝ ME&A-ն ծրագրի հասարակայնության հետ կապերի համար կհատկորոշի թիրախային լսարանների լրացուցիչ խմբերի/ենթախմբերի և կերաշխավորի Հայաստանի Հանրապետությունում ծրագրի լայնաչափ տեսանելիությունը՝ քաղաքականությունների բարեփոխման շրջանակում հաստատելով համապատասխան կապեր և իրականացնելով հասարակական իրազեկման գործողություններ: Խիստ զգայուն քաղաքական հարցերի դեպքում կարող է պահանջվել ծրագրի ավելի քիչ տեսանելիություն: Վերջինս կորոշվի առանձին դեպքերի ուսումնասիրման արդյունքում՝ խորհրդակցելով ԱՄՆ ՄՁԳ-ի հայաստանյան առաքելության հետ:

**Դերերի հստակեցում.** Ծրագիրը և ծրագրին առնչվող հաղորդակցությունն ու նյութերը կհամարվեն ԱՄՆ ՄՁԳ-ի սեփականությունը և բացառապես մակնշված կլինեն ԱՄՆ ՄՁԳ-ի նույնականացման նշանով: ԳUSO ծրագրի շրջանակում իրականացվող բոլոր հասարակական միջոցառումների ժամանակ և հասարակայնության հետ կապերում ME&A-ն կընդունի, տեսանելի ու հասկանալի կդարձնի, որ *ծրագիրը և ծրագրային բոլոր գործողությունները և (կամ) նյութերը/հանձնման ենթակա արդյունքները հնարավոր են դարձել ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցության շնորհիվ:* Եթե կոնկրետ ծրագրի շրջանակում թույլատրվում են դրամաշնորհներ, ապա ME&A-ն փոքր դրամաշնորհների փաստաթղթերում և կատարվելիք բոլոր գնումներում հստակորեն, ակնհայտորեն կնշի, որ դրամաշնորհային գումարները նվիրաբերվել են ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից, ինչպես նաև կպարզաբանի, որ Կապալառուն գործում է որպես ԱՄՆ ՄՁԳ-ի կատարող: Մատակարարի կողմից պատրաստվող բոլոր նյութերը և հաղորդակցությունը նույնպես պետք է համապատասխանեն ԱՄՆ ՄՁԳ-ի բրենդավորման պահանջներին, որոնք կիրառվում են պայմանագրերի համար:





### **Բրենդավորման պլան**

Պայմանագրով նախատեսված հանձնման ենթակա արդյունքները, որ մակնշվում են ԱՄՆ ՄՁԳ-ի նույնականացման նշանով, պետք է գույնի, տեսակի, դասավորության առումով պատրաստված լինեն *Գրաֆիկական ստանդարտների ձեռնարկում* տրված դիզայնի ցուցումների ([www.usaid.gov/branding](http://www.usaid.gov/branding)), կամ ցանկացած այլ հաջորդող բրենդավորման քաղաքականության պահանջների համաձայն:

Ծրագրի իրականացման ընթացքում ME&A-ն շարունակաբար կգտնի հասարակության իրազեկման նոր հնարավորություններ: Ստորև բերված են հաղորդակցության գործիքներ և նյութեր.

- Մամլո հաղորդագրություններ, որոնք կտրամադրվեն հայաստանյան լրատվամիջոցներին.
- Մամլո ասուլիսներ՝ ծրագրերի մեկնարկի, զեկույցների և հետազոտությունների ներկայացման նպատակով.
- Տեղական և հանրային լրատվամիջոցների հետ հարցազրույցներ.
- Ծրագրային տարածքներ այցելություններ ԱՄՆ ՄՁԳ-ի անձնակազմի և ՀՀ պետական պաշտոնյաների հետ.
- Ծրագրերի իրականացման վերաբերյալ հաջողության պատմություններ, որոնք կհրապարակվեն կայքում և սոցիալական լրատվամիջոցներով.
- Շահառուների կողմից վկայություն՝ լրահոսներում և հաջողության պատմություններում օգտագործվող մեկնաբանություններ.
- Մասնագիտորեն արված լուսանկարներ՝ տպագիր և էլեկտրոնային հրապարակումների համար.
- Հեռուստատեսությամբ, ռադիոյով և տպագիր մամուլով արվող սոցիալական գովազդներ, որոնք խթանում են արդյունավետ ջրօգտագործման շուրջ հասարակական իրազեկության բարձրացումը.
- Տեսանյութեր՝ էլեկտրոնային տարբերակով հաջողության պատմություններ համացանցով և DVD սկավառակներով տարածման համար.
- Կայք/սոցիալական լրատվամիջոցներ՝ շահագրգիռ կողմերի, թիրախային լսարանների շրջանում տեղեկատվության շուրջօրյա տարածման համար.
- Հրատարակություններ՝ բրոշյուրներ, թռուցիկներ, ցուցանակներ, տեղեկատվական թերթիկներ, պաստառներ և այլն.
- Ծրագրային միջոցառումներ՝ համայնքային միջոցառումներ, աշխատաժողովներ, խորհրդաժողովներ, ծրագրերի մեկնարկ և այլն:

ME&A-ն կմշակի բրենդավորման ռազմավարություն՝ տարբեր լրատվամիջոցների օգնությամբ հանրապետության տարածքով մեկ ԳԱՏՕ ծրագրի հիմնական ուղերձը հրապարակելու և շահագրգիռ կողմերին Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների խնդիրների հրատապության մասին իրազեկելու նպատակով: ME&A-ն ԱՄՆ ՄՁԳ-ի հայաստանյան առաքելությանը կտրամադրի հաջողության պատմություններ և ծրագրին առնչվող այլ տեղեկություններ՝ Գործակալության կայքում և սոցիալական լրատվամիջոցներով հրապարակելու համար: ME&A-ն սեփական և WADI IDIQ ([wadi-mea.com](http://wadi-mea.com)) կայքերում կստեղծի ԳԱՏՕ ծրագրին նվիրված առանձին էջ՝ առաջնային և երկրորդային լսարաններին հաղորդակից դարձնելով ծրագրային նյութերին և իրադարձություններին, այդ թվում՝ հաջողության պատմություններ, նորություններ, առաջիկա գործողություններ,

տեսանյութեր, մուլտիմեդիա նյութեր և այլն: Տվյալ բաժնում ներկայացված կլինեն ԳՄՏՕ ծրագրի նպատակները, որտեղ թիրախային լսարանները՝ լրատվամիջոցները, կենտրոնական և տեղական կառավարման մարմինները, ՀԿ-ները, ՔՀԿ-ները և այլ շահագրգիռ կողմերը կարող են տեղեկանալ ԳՄՏՕ ծրագրի գործողությունների և Հայաստանում դրանց ունեցած ազդեցության մասին: ME&A-ի հայաստանյան ծրագրի թիմը սերտորեն կաշխատի ԱՄՆ ՄՁԳ-ի հայաստանյան առաքելության հետ, որպեսզի երկարատև հարաբերություններ հաստատի տեղական լրատվամիջոցների հետ՝ ծրագրի շուրջ հասարակական իրազեկությունը բարձրացնելու նպատակով:

**Սոցիալական լրատվամիջոցների** լայնատարած օգտագործումը դարձել է շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցության կարևոր և արդյունավետ ձև: Աշխատելով ԱՄՆ ՄՁԳ-ի հայաստանյան առաքելության հետ՝ ME&A-ն սոցիալական լրատվական հարթակների, օր. Facebook, Twitter, LinkedIn, օգնությամբ կխթանի ծրագրային միջոցառումները և հրապարակումները: Սոցիալական լրատվական հարթակներում ME&A-ն հանդես կգա ինչպես անզլերեն, այնպես էլ հայերեն լեզուներով: ME&A-ն ԳՄՏՕ ծրագրի թիմի անդամներից մեկին կհանձնարարի վերահսկել բրենդավորման ռազմավարությունը և սերտորեն աշխատել ԱՄՆ ՄՁԳ-ի հայաստանյան առաքելության և ME&A-ի գլխամասային գրասենյակի հետ՝ հասարակական իրազեկման ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով:

Բրենդավորման հնարավորություն հաճախ ստեղծվում է նաև Ծրագրի շրջանակում անցկացվող **աշխատաժողովների և խորհրդաժողովների** ժամանակ: Համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների և ԱՄՆ ՄՁԳ-ի առաքելության հետ՝ ME&A-ն կազմակերպում է նաև տեղական և տարածքային մակարդակով համայնքային հանդիպումներ և աշխատաժողովներ, որոնք հաճախ անցկացվում են ՔՀԿ-ների մասնակցությամբ:

Հիմնական ծրագրային ձեռքբերումներից են՝ ծրագրերի և կարևոր միջոցառումների մեկնարկը, վերապատրաստման ծրագրերը, զեկույցների հրապարակումը, հաջողության պատմությունները և առնչվող այլ գործողությունները:

**Ծրագրի հիմնական ուղերձը՝** աջակցել Հայաստանում ջրային ռեսուրսների կայուն կառավարմանը և ջրօգտագործողների կողմից առաջադեմ փորձի կիրառմանը՝ գիտական, տեխնոլոգիական, նորարարական մոտեցումների կիրառմամբ:

**Անզլերեն լեզվով՝** “To support Armenia’s sustainable water resource management and sustainable water practices with the use of science, technology, and innovation”

**Լսարաններ.** ԳՄՏՕ ծրագրի թիրախային լսարաններն են.

**Առաջնային լսարան.** ԳՄՏՕ ծրագրի հիմնական թիրախային լսարաններն են՝ Արարատյան դաշտի համայնքները, տեղի ձկնաբուծական տնտեսությունները, Արարատյան դաշտի ջրօգտագործողների ընկերությունները, ՀՀ կառավարությունը (ներառյալ ՀՀ բնապահպանության նախարարությունը և Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը (ՋՌԿԳ), Արարատյան դաշտի Ջրավազանային տարածքային կառավարման բաժինները (ՋՏԿԲ-ներ), ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը), ինչպես նաև տեղական ՀԿ-ները և լրատվամիջոցները:

**Երկրորդային լսարան՝** հանրապետության այլ ջրավազանային կառավարման տարածքների ջրօգտագործողները, ՀՀ ազգային ժողովը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը, Ազրոբիզնեսի ուսուցման կենտրոնը (ԱՌԻԿ), Հայաստանի ամերիկյան համալսարանը և այլ դոնորներ (օր. Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO), KfW):

## Մակնշման պլան

ME&A-ն ԱՄՆ ՄՁԳ-ի բացառիկ մակնշումը կօգտագործի ԳԱՏՕ ծրագրի շրջանակում իրականացվող բոլոր գործողությունների կապակցությամբ տպագիր և էլեկտրոնային մամուլի բոլոր հրապարակումներում, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետազոտություններով, զեկույցներով, PowerPoint ներկայացումներով, ինչպես նաև տեղեկատվական և գովազդային արտադրանքներում, օր.՝ բրոշյուրներ, թռուցիկներ, տեսանյութեր:

Մակնշումը պետք է առկա լինի հանձնման ենթակա արդյունքների վրա, ներառյալ տրամադրվող ապրանքները, սարքավորումները, ներդրումները, ինչպես նաև այն վայրերում, որտեղ իրականացվում են ծրագրային գործողությունները: Մակնշման առկայությունը պարտադիր է նաև արտաքին հանրային հաղորդակցության, վերապատրաստման նյութերի, հետազոտությունների, զեկույցների, հրատարակությունների, տեղեկատվական ու գովազդային արտադրանքների, աշխատաժողովների և խորհրդաժողովների, ինչպես նաև ՋԼՄ-ների հետ կապված ցանկացած գործողության համար: Բոլոր ենթակառուցվածքային ծրագրերի տարածքներում՝ համապատասխան վայրում, պետք է առկա լինի կատարված աշխատանքներում ԱՄՆ ՄՁԳ-ի անմիջական մասնակցությունը ցուցադրող նշան՝ ինչպես ժամանակավոր, այնպես էլ մշտական:

Մակնշման պահանջը կկիրառվի բոլոր վերապատրաստման դասընթացների, խորհրդաժողովների, սեմինարների, աշխատաժողովների, մամլո ասուլիսների և ԳԱՏՕ ծրագրի շրջանակում իրականացվող այլ հասարակական միջոցառումների համար. տեսանելի վայրում առկա կլինի ցուցանշան՝ ԱՄՆ ՄՁԳ-ի համապատասխան լոգոտիպով և կարգախոսով: Ցուցանշանը միշտ դրվում է ամբիոնների, կախովի պաստառների, սեղանի ծածկոցների կամ պլակատների վրա, և ռազմավարական առումով տեղակայված է միջոցառման անցկացման վայրում (կամ) մուտքի մոտ: ԱՄՆ ՄՁԳ-ի մակնշումը առկա կլինի նաև միջոցառումների հետ առնչվող բոլոր հրատարակություններում, օր.՝ հրավերներ, վկայականներ, պարզկներ, մամլո հաղորդագրություններ, հրապարակային և լրատվական նյութեր:

<b>ԱՂՅՈՒՄԱԿ 1. ՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱԿՆՇՄԱՆ ՊԼԱՆ</b>	
<b>Դասակարգում</b>	<b>Մակնշման տեսակը</b>
<b>Վարչական</b>	
Նյութեր, սարքավորումներ, կահույք	Ըստ ԱՄՆ ՄՁԳ պահանջի՝ սարքավորումների վրա կտպվի ԱՄՆ ՄՁԳ-ի նույնականացման նշանը: Դիզայնը պետք է համապատասխան լինի ամբողջական բրենդավորման ուղեցույցների պահանջներին, քանի դեռ համատեղ բրենդավորման կամ բրենդավորումից ազատման մասին որոշում չի ընդունվել:

<b>Տեխնիկական</b>	
<b>Տեխնիկական զեկույցներ</b>	<p>ԱՄՆ ՄԶԳ-ի նույնականացման նշանը կտպվի փաստաթղթերի առաջին էջին: Դիզայնը պետք է համապատասխան լինի ամբողջական բրենդավորման ուղեցույցների պահանջներին, քանի դեռ համատեղ բրենդավորման կամ բրենդավորումից ազատման մասին որոշում չի ընդունվել:</p>
<b>PowerPoint ներկայացումներ</b>	<p>ԱՄՆ ՄԶԳ-ի նույնականացման նշանը պահանջվում է սլայդերի վերնագրերում: Դիզայնը պետք է համապատասխան լինի ամբողջական բրենդավորման ուղեցույցների պահանջներին, քանի դեռ համատեղ բրենդավորման կամ բրենդավորումից ազատման մասին որոշում չի ընդունվել:</p>

ԱՂՅՈՒՄԱԿ 1. ՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱԿՆՇՄԱՆ ՊԼԱՆ	
Դասակարգում	Մակնշման տեսակը
Ծրագրային նյութեր՝ <ul style="list-style-type: none"> <li>• բրոշյուրներ</li> <li>• մամլո հաղորդագրություններ</li> <li>• պաստառներ</li> <li>• հետազոտություններ</li> </ul>	ԱՄՆ ՄԶԳ-ի նույնականացման նշանը կտպվի նյութի առաջին էջին: Դիզայնը պետք է համապատասխան լինի ամբողջական բրենդավորման ուղեցույցների պահանջներին, քանի դեռ համատեղ բրենդավորման կամ բրենդավորումից ազատման մասին որոշում չի ընդունվել:
Կայք, սոցիալական լրատվամիջոցներ	ԱՄՆ ՄԶԳ-ի նույնականացման նշանը կդրվի կայքում/սոցիալական լրատվամիջոցների հարթակում: Դիզայնը պետք է համապատասխան լինի ամբողջական բրենդավորման ուղեցույցների պահանջներին:
Խորհրդաժողովներ, աշխատաժողովներ	ԱՄՆ ՄԶԳ-ի նույնականացման նշանը կցուցադրվի ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող միջոցառումների ժամանակ, օր.՝ վերապատրաստման դասընթացներ, խորհրդաժողովներ, սեմինարներ, ցուցահանդեսներ, տոնավաճառներ, աշխատաժողովներ, մամլո ասուլիսներ և այլն:
Տեխնիկական սարքավորումներ	ԱՄՆ ՄԶԳ-ի նույնականացման նշանը կցուցադրվի բոլոր այն սարքավորումների վրա, որոնք գնվել և գործընկերներին ու շահառուներին տրամադրվել են ծրագրի շրջանակում, օր.՝ հոսքաչափեր, համակարգիչներ, տաքացուցիչներ և այլն:

Ծրագրի բոլոր հանձնման ենթակա արդյունքները, որոնք չեն հեղինակվել, վերանայվել կամ խմբագրվել ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից, կներառեն դրույթ հետևյալ բովանդակությամբ.

*«Մույն ծրագիրը/հետազոտությունը/հաշվետվությունը/կայքը/հեռուստահաղորդումը/ֆիլմը/հոլովակը պատրաստվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու է միմիայն (կազմակերպության անունը), և այն կարող է չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ-ի կամ ԱՄՆ կառավարության տեսակետները»:*

Անգլերեն լեզվով՝ “This project/study/report/website/TV program/film/PSA is made possible by the support of the American people through the United States Agency for International Development (USAID). The contents are the sole responsibility of the (name of organization) and do not necessarily reflect the views of USAID or the United States Government.”

Բոլոր հանրային նյութերը հրապարակելուց և (կամ) տարածելուց առաջ ME&A-ն կդիմի ԱՄՆ ՄԶԳ-ին՝ գնահատական և պաշտոնական թույլտվություն ստանալու համար:

ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի նյութերում չեն օգտագործվի ME&A-ի և որևէ մատակարարի կազմակերպական նույնականացման նշանները կամ լոգոտիպերը: ME&A-ն գիտակցում է, որ մակնշում չի պահանջվում կապալառուի փոխադրամիջոցների, գրասենյակների, գրասենյակային պարագաների կամ այլ ապրանքների վրա, որոնք բացառապես օգտագործվում են ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի վարչական կառավարման համար:

Մակնշում չի պահանջվում նաև բոլոր այն փաստաթղթերի վրա, որոնք կրում են խիստ վարչական բնույթ, այլ ոչ թե ծրագրային: ԱՄՆ ՄԶԳ-ի նույնականացման նշանն արգելված է նաև կապալառուի կամ կատարողի այցեքարտերի, ինչպես նաև շնորհված պայմանագրի վարչարարարության հետ առնչվող փաստաթղթերի վրա, օր.՝ աշխատողների վարձում/ազատում կամ գրասենյակային տարածքի և (կամ) սարքավորումների վարձակալում:

**Հեղինակի կողմից հայտարարություն.** ԱՄՆ ՄԶԳ ԳՍՏՕ ծրագրի արտաքին և ներքին հրատարակություններում, օր.՝ ամսական հաշվետվություններ, ME&A-ն, ըստ անհրաժեշտության, կներառի հետևյալը.

«Մույն փաստաթուղթը պատրաստվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից դիտարկման համար: Այն պատրաստվել է ME&A-ի կողմից ԳՍՏՕ ծրագրի համար: Պայմանագիր թիվ AID-OAA-I-14-00070/AID-111-TO-15-00001 »:

**Հյուրընկալող երկրի կառավարության դերի ճանաչում.** ՀՀ կառավարության հետ համատեղ իրականացվող նախաձեռնությունների և հասարակական միջոցառումների դեպքում ME&A-ն կխորհրդակցի ԱՄՆ ՄԶԳ-ի հետ՝ համապատասխան միջոցառում(ներ)ը, հանձնման ենթակա արդյունք(ներ)ը նրանց լոգոտիպ(եր)ով համատեղ մակնշելու հնարավորության վերաբերյալ:

**Այլ կազմակերպությունների դերի ճանաչում/համատեղ բրենդավորում:** Ծրագրի իրականացման ընթացքում ԳՍՏՕ-ն ակնկալում է համագործակցել տեղական կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ: Եթե գործընկերները էական ներգրավվածություն ու աջակցություն ցուցաբերեն որոշակի նախաձեռնություններին, ապա ME&A-ն կխորհրդակցի ԱՄՆ ՄԶԳ-ի հետ՝ նրանց լոգոտիպերով համատեղ մակնշման նպատակահարմարության վերաբերյալ: